

իր շուրջը խմբելով Ամերիկական գործիչներու մեծ թիւ մը, գրաւելով բոլորին համա-կրանքն ու հիացումը, եւ ներշնչելով ու առաջնորդելով զանոնք ազգային ծառայութեանց:

Անա այս կարգի անսպասելի արժանիքներով մեկուն Յոբելեանն է որ կը կատարուի: Եկեղեցականի մը, որ աւելի քան քսան տարիներ ծառայած է իր ժողովուրդին՝ դիւրով, խօսքով եւ գործով, իր ասիանի արժանաւայել գիտակցութեամբ, որ «սակաւ ընտելաթմբերու առանձնաւնորոն է միայն»:

Այս տոնախմբութեան մէջ, իր մէջի, արտի, գրչի եւ խօսքի շնորհներէն աւելի Հայ Եկեղեցիի մտածումն է որ կը փառաւորուի իր արժանաւոր պատշոնին յոբելեանով: Սահակներու, Մեսրոպներու եւ Ներսէսներու հոգին կեցող բախն ոյժը, որ տարիներու մօտը գծախառնութեանց մէջ պահած է միշտ իր ներքին կենսականութիւնը, այսօր նորէն յարգանքի եւ նուիրումի առաւելով կ'ըլլայ Գարեգին Արքայանի պատշաւական անձին մէջ: Այդ է պատճառ անտարակոյս որ Յոբելեանական այս տոնախմբութիւնը կը գուզազդի իր Կարողիկոսական ընտելութեան՝ յԱթոռ Մեծի Տանն Կիլիկիոյ:

Սիոն, Վեհաւանքն ու Արքայան Յոբելեանին կը մտադրէ ամեն բանէ առաջ Բաշառող արեւածառութիւն, ազգանուէր ծառայութեան իր նոր ասպարեկին համար, իրեն ազատելի լաւագոյն արգիւններու փափաքով: Այս մագրանքն է որ ունին իրենց շրթներուն անտարակոյս, ոչ միայն Կիլիկիոյ՝ այլ բովանդակ Հայ ժողովուրդի հաւատացեալ գաւակները:

ՀԱՒՍՏՔԻ ԷՒ ՄՍԱԾՄԱՆ ՑՈԼՔԵՐ

✱ Գործէ այնպէ՛ս, որպէս թէ լսելի Աստուծոյ կոչը. եւ հրաշքաւոր բլլայի համագործակցելու Անոր գործին՝ ապաք եւ սեղծագործ արարելով մը: Գիտէ՞ք քան մէջդ անխառն եւ իսկական գիտակցութիւնը. կազմակերպէ անձը, կ'առէ շարին գէ՛տ՝ քան մէջդ եւ քան շուրջդ, նպատակ ունենալով ոչ թէ բազմաութիւն մը ստեղծել անկէ՛ք զայն գոմարի մղելով, այլ իրապէս նուանել զայն, օգնելով որ լուսաւորուի եւ պայծառակերպուի ընտելութեամբ:

✱ Ունակութիւն քրէ՛ք ընելու եւ քսելու ինչ որ կրնայ մարդերը միացնել իրարու հետ... ծառայեցէ՛ք մարդուն, նոյն իսկ ա՛յն մարդուն, որուն չէ՛ք կրնար սիրել անձը:

ԼԵԶՈՒՆԳ-ԻՏԱԿԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ^(*)

3. Իրական անուններից բոլոր նրանք, որոնք կազմուած են դուխս, անոյց և ունի վերջաւորութեամբ, իրանական են: Հայ մատենագրութիւնը արդէն շատ ժլատ է իրական անունների վերաբերմամբ, եւ եղածներն էլ ոչ թէ իրապէս անուն են, այլ նշանակում են «այսինչի աղջիկը կամ դուստրը»: Տրդատի քոյրը կոչւում էր Խոսրովիդուխա, որովհետեւ Մեծն Խոսրովի աղջիկն էր: Սմբատ Բագրատունու երկու աղջիկները կոչւում էին Սմբատանոյլ եւ Սմբատուհիւ: Հին հայոց մէջ ամօթ էր համարուում ուղղակի կնոջ կամ աղջկայ անունը տալ: Ճիշտ ինչպէս այսօր Ղարաբաղում կամ Զանգեզուրում, ուր կանայք կամ օրիորդները կոչւում են «այսինչի աղջիկ»: Երեւոյթը շատ տարբեր է եւրոպական քաղաքակիրթ երկիրների այն սովորութիւնից, որով ամէն մի օրիորդ իր հօր ազգանունով և ամէն մի կին իր ամուսնու ազգանունով է կոչւում, առանց իր իսկական անունն յիշատակութեան: Հին հայոց այս սովորութիւնն էլ ընդհանուր արեւելեան, բայց յատկապէս պարսկական է:

4. Տեղական յատուկ անունները անձնականների համեմատութեամբ մեծ թիւ չեն կազմում. որովհետեւ անձերի անունները հեշտութեամբ փոխւում են, հները մոռացւում և նորերն են գալիս. բայց տեղական անունները շատ երկար կեանք ունին: Ինչպէս արդէն տեսանք, Հայաստանի տեղական անունները Խաչիւրիական անունների շարունակութիւնն են ներկայացնում և միայն նոր ժամանակ աւելացած քաղաքների և գիւղերի անուններն են՝ որ տարբեր են: Սրանցից նրանք՝ որ կրում են ւաս, կեթ, աւան, ապաք վերջաւորութիւնները, պարսկական կազմութիւն ունին,

(*) Շարունակութիւն՝ մեծանուն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործին Թ. Գլուխէն:

որովհետեւ այս բառերը պարսկերէն են։
 Ընդ խօսքով հայոց մէջ գործածուած իրանական բաղմամբիւ յատուկ անունները, թէ՛ անձնական և թէ՛ տեղական, անհերքելի նշան և ապացոյց են պարսկական շատ խոշոր ազդեցութեան մեր վրայ։

Պարսկերէն լեզուի ազդեցութիւնը մեծ է անշուշտ նաեւ մեր լեզուի ներքին կազմութեան, այն է ոճերի, ասացուածների, բառերի տարբեր առումների, շարադասութեան և համաձայնութեան վրայ։ Դժբախտաբար այս տեսակէտից քննութիւններ կատարուած չեն դեռ։ Ուստի բաւականա՜նում ենք հաւաքելով այստեղ այն՝ ինչ որ կարողացել ենք նկատել մեր աշխատութեանց ժամանակ։

Փող հարկանել = պրս. բորի զաղան
 Ծեծ ուտել = պրս. նայնպէս ուտել բայով երգում ուտել = պրս. սաւկանդ խորդան
 Վիճակ արկանել = պրս. կուրա ենգախբեն
 Օր մի յաւուրց = պրս. ռուզի եզ ռուզիա
 Երթալով (հետզհետէ) = պրս. բեժրե բեժրե
 Երեսս դարձուցանել = պրս. ռույ գերգիդեն
 Կամագիւտ = պրս. փալյալ
 Կապել դուռը (գոցել) = պրս. դեռա բասան
 Հարկանել ողբ = պրս. ֆեռիադ զեդեն
 Հարկանել ծունր = պրս. զանու զեդեն
 Լիխ քաշել = պրս. անի ֆեռիդան
 Զուր քաշել = պրս. աք ֆեռիդան
 Նեղութիւն քաշել = զանմեղ ֆեռիդան
 Խնձ ինչ = պրս. մերա՞ չի
 Ո՞ր մէկ = պրս. փուլամ յեկ
 Երկարել (ձեռքը) = պրս. դիրազ գերդան
 Թեթեւոտ (արագ) = պրս. սեբուկ բու
 Ինչո՞ւ փխ. է՞ր, զի՞ = պրս. շիրա
 Ծովակ (իրը լիճ) = պրս. դերյաշե ան են։

Վերոյիշեալ բոլոր փոխառութիւնները, յատուկ թէ՛ հասարակ անուն, ոճ թէ՛ ասացուածք, բոլորն էլ ամենամեծ մասամբ հաստատուած և ապացուցուած են մեռած կամ կենդանի որեւէ իրանական լեզուի ձեւերով։ Բայց վերեւում արգէն ասացինք, որ իրանական գրականութիւնը շատ չնչին չափերով հասել է մեզ. կան բառեր, որոնց երբեմնի գոյութիւնը իրանական լեզուներում, հայերէնն է միայն մատնանիշ անում. արգէն իբր օրինակ յիշել ենք աւրուսան բառը. այստեղ կը յիշենք մի քանի ուրիշներ։

1. Կան մի խումբ բառեր, որոնք

ներկայացնում են որեւէ գուտ պարսկական պաշտօն, աստիճան են, և հետեւաբար անշուշտ պարսկերէն են. բայց հայերէնից դուրս ոչ մի լեզուի մէջ չեն գտնուում. այսպէս զինգալապէս՝ «պարսկական դորապետական աստիճան», ալպահայիկ՝ «պարսկական գնդի անուն», մասեան՝ «պարսից անմահների գունդը», պեմոգ՝ «գրագաշտական հինգ վարդապետական ձեւերից դուրս մի ազանդ», որ ըստ պարսից անսուրբ և հերձուածական էր համարուում, խորուարան՝ «պարսկական սպարապետական աստիճան», խոնասան «պարսից արքայական պալատը» են։

2. Կան մի խումբ բառեր, որոնց մի կէսը արգէն պարսկերէն լինելով՝ յայտնի է որ ամբողջութեամբ պէտք է պարսկերէն լինին, բայց ոչ մի իրանական լեզուի մէջ գոյութիւն չունին. այսպէս՝ աւրուսան, աւրուսեակ, աւրախոյր, աբխարաւանդ, հաւալաւ, ժախոռապէս, հաւեւան։

3. Կան մի խումբ բառեր, որոնք գտնուում են միայն հայերէնի և զենգերէնի մէջ, որ թէ՛ և իրանական լեզու է, բայց պարսկերէն չէ և հայերէնի հետ ուղղակի կապ չունի. ինչ. կախարդ, հաւազան են։ Սրանք աւանդուած չեն ոչ հին պարսկերէնում, ոչ պահլաւերէնում, և ոչ էլ նոր պարսկերէնում։ Բայց որովհետեւ զենգերէնում կան, ուստի իրանական են. եւ որովհետեւ հայերէնում էլ կան, ուստի անշուշտ պարսկերէնում էլ գտնուած պէտք է լինին։

4. Կան վերջապէս բառեր, որոնց գոյութիւնը պարսկերէնում ապացուցուած է աւելի հեռուոր միջոցներով. օր. վիւն = «քնար», նոյն է սանա. վիւնա = «քնար» բառի հետ. այս բառը իթէ ցեղակցութեան պատճառաւ նման լինէր սանսկրիտի հետ, պիտի ունենար զին ձեւը. ուստի պարսկական փոխառութիւն է և պէտք է որ պարսկերէնում երբեմն գոյութիւն ունեցած լինի վիւն = «քնար» բառը։ — Հյ. ապանդակ = «վրանի չուան» նոյն է սանա. ուպաբանդիա = «կապ, չուան» բառի հետ. բայց երկուսը ոչ մի ձեռով չեն կարող կապուիլ իրար, եթէ ոչ ենթադրելով պիւ. ապաբանդակ = «չուան» բառը։ Ասիեան համեմատուում է հնիս. սսիիգի = «երթալ, աստիճանից կամ սանդուխից վերեւ բարձրանալ» արմատի

հետ: Եթէ բառը բնիկ հայերէն լինէր, պիտի ունենար առ առաւելն աստիճան, աստիճան, աստիճան ձևերը, բայց ոչ բնաւ ն. ուստի պէտք է ենթադրել որ մեր բառը պարսկականից փոխառութիւն է և հետեւաբար պահպանելնու՜մ այդ ձևով մի բառ գոյութիւն ունեցած պէտք է որ լինի:

Այս բոլորը ցոյց է տալիս, որ բացի վերոյիշեալ 751 բառերից, կան հայերէնի մէջ դեռ շատ բառեր, որոնք զուտ իրանական փոխառութիւն են, թէեւ փաստօրէն կարելի չէ ապացուցանել այդ, քանի որ նրանց համապատասխանը չի գտնուում որեւէ իրանեան լեզուի մէջ: Լեզուաբանի ականջը վարժ է զգալու այդպիսիները լոկ հնչական ձևից, այսպէս պարսկական են հնչում ականսան, ամբասան, աշխարհաւանդիկ, աշխոյժ, աշանակ, աշարակ, ապարօշ, ապիզակ, հանապաղ և շատ այսպիսի բառեր: Առհասարակ այն հայերէն բառերը, որոնք սկսում են հրա, պա, սկզբնաւորութեամբ, կամ վ տառով և կամ վերջանում են ալ վերջաւորութեամբ, պարսկական փոխառութիւն են: Զրա սկզբնաւորութեամբ մենք ունինք 24 բառ, որոնք են. հրաժարիլ, հրաժեշտ, հրահանգ, հրամայել, հրաման, հրամանատար, հրամեմ, հրաւե, հրապար, հրապարակ, հրապոյր, հրապախ, հրասարակել, հրաւեր, հրքուակ, հրեշտակ, հրէշ, հրիսակ, հրճումն, հրճակ, հրովարակ, հրոսից, հրումանգան, հրուակ. որոնցից 12ը յայտնի է որ պարսկերէն է, որոնց մէջ հրա համապատասխանում է պրա. Ֆրա նախամասնիկին. տարակոյս չկայ որ միւսներն էլ նոյնպէս փոխառեալ են պարսկերէնից, մանաւանդ որ մի քանիսի համար (հրաժարիլ, հրաժեշտ, հրաւե, հրասարակել) ուրիշ նշաններ էլ կան:

Պա սկզբնաւորութեամբ ունինք 59 բառ, որոնք են. պասահիլ, պասահար, պասաղիլ, պասանգ, պասանի, պասառ, պասախանի, պասաբել, պասարագ, պասգահիկ, պասգամ, պասգարակ, պասգարհել, պասգոս, պասգոսաբան, պասեղ, պասեպարզմ, պասգբել, պասժախ, պասժանակ, պասիժ, պասին, պասինաղ, պասիննան, պասիր, պասիւ, պասկան, պասկանգարան, պասկանիլ, պասկառիլ, պասկեր, պասկեն, պասնառ, պասնեն, պասմուճակ, պասմուհան, պասնեռ, պասեան, պասեգամ, պասեմ,

պասեիր, պասումանգան, պասուաս, պասուալուր, պասուար, պասուէր, պասուիրակ, պասուիրան, պասուհան, պասուհաս, պասմել, պասպարել, պասրաս, պասրինջ, պասրոյգ, պասրոյս, պասրուակ, պասրուն, պասրուճակ: Սրանցից 28ը պարսկերէն են, որոնց մէջ պա ս համապատասխանում է զնդ. պասի, պհ. պա, պրա. փայ նախամասնիկին, որ այնպէս յաճախական գործածութիւն ունի իրանեան լեզուներին մէջ. և տարակոյս չկայ՝ որ ֆնացեալներին էլ գոնէ մեծազոյն մասը պարսկերէն է:

Վ տառով սկսող հայերէն բառերը 17ը հատ են, որոնցից 12ը կասկածելի և անըստոյգ, 7ը յուշարէն, 4ը լատիններէն, 12ը երբայեցներէն, 2ը արաբերէն, 3ը բնիկ հայերէն (վարսուն, վեց, ի վերայ) և 52 հատը պարսկերէն են. ֆնացեալ 91 հատն էլ՝ որ անձանթժ է մեծազոյն մասամբ պարսկերէն պէտք է լինին: Արդարեւ հնդեւրոպական վ բառասկզբում հայերէնի մէջ դառնում է գ, հնիս. սվ դառնում է ֆ և հազուադէպ պարագաներ միայն կարելի է գտնել, ուր հնդեւրոպական մի ձև տայ հայերէն վ: Այսպէսով հայերէն բոլոր բառերը՝ որ սկսում են վ ձայնով, չեն կարող հայերէն լինել և յառաջագունէ ենթադրուում է որ փոխառեալ պիտի լինին: Իրանեան լեզուները ունին վի նախամասնիկը, որ այնպէս յաճախական գործածութիւն ունի նրանց մէջ և որ սղուելով՝ հայերէնի մէջ դառնում է վ: Եւ ահա այստեղ է մեր վ-ով սկսող բառերի աղբիւրը:

Դաւով ալ վերջաւորութեան, իբրեւ օրէնք կարելի է դնել, որ ամէն հայերէն բառ՝ որ վերջաւորում է ալ և այն ալը նուազական մասնիկ չէ, ուրիշ խօսքով այդ ալը ջնջելով չի ստացւում նոյն բառի մեծը, անշուշտ պարսկերէն է: Այսպէս՝ պարսկերէն են նամակ, հրեշտակ, հրովարակ, ամանակ, ժամանակ, նիզակ, սպիտակ, հրուակ, զանձակ, դասակ, դմակ, երակ, ֆակ, ամբակ, փաթերակ, փերեզակ ևն ևն: — ալ վերջաւորութիւնը պահպանելնի մէջ որոշ բառակազմիչ տարր է (պարսկերէնի մէջ դառնում է ա), ուստի ուր որ հայերէնի մէջ նուազական չէ, հաւանաբար պահպանելն է:

Այն միտքը թէ պարսկերէն մի բառ կարող է հայերէնում պահուած լինել եւ

ընդհանրապես բոլոր իրանեան լեզուները և բարբառները մէջ ջնջուած լինելը՝ բնաւ չպիտի զարմանալի թուի. որովհետեւ հինց այդ իրապէս տեսնում ենք յատուկ անունների մէջ, քանի որ այսօր էլ հայերը շարունակում են կրել Առասաւ, Շաւաթ, Արեւակ, Բազարաս և այլ նման իրանական անուններ, որոնք մահմեդական պարսիկները խաղաղ չգիտեն։ Դեռ սրանից մի քանի տարի առաջ այդպիսի զարմանալիների շարքումն էին բորոս, պասիւ, պասիւր, պաւար, մուրալ, կարի, պարար, պարարս ևն բառեր, որոնք սակայն նորագիւտ սոցալական գրութեանց մէջ գտնուեցան եւ հաստատուեցաւ որ իրանական փոխառութիւն են։

ԺԱ դարի հետ սկսեց թուրքական հորգանների յառաջխաղացութիւնը արեւելքից արեւմուտք եւ այդ ժամանակից սկսած կտրուեց հայ ու պարսիկ ժողովուրդների հարեանութիւնը. կտրուեց նաեւ պարսիկ լեզուի ազդեցութիւնը հայերէնի վրայ. այդ ժամանակից սկսում է մի նոր շրջան հայերէնի համար՝ թուրք-թաթարական ազդեցութիւնների շրջանը, որի վրայ պիտի խօսինք առանձին գլխով։

Բայց պարսիկները, ինչպէս հայերի, նոյնպէս և թուրքերի վրայ առանց ազդեցութեան չմնացին. ընդհանրապես այդ ազդեցութիւնը՝ իբրեւ շատ աւելի անքաղաքակիրթ ժողովրդի վրայ, շատ աւելի մեծ եղաւ. և պարսկական լեզուի ազդեցութիւնը՝ այս անգամ թուրքերէնի միջոցով նոր ձևի տակ շարունակեց նաեւ հայերէնի վրայ և շարունակում է մինչև այսօր։ Սակայն այս ազդեցութիւնը արդէն թուրքական կերպարանքի տակ մտած լինելով՝ այդ մասին մեր ուսումնասիրութիւնը պէտք է կցենք նրա հետ։

Վերջացնելու համար այս գլուխը, կարեւոր ենք համարում անել երկու նկատուութիւն ևս։

1. Մենք մինչև այստեղ թուեցինք այն բոլոր պարսկական փոխառութիւնները, որոնք աւանդուած են մեզ հին հայ գրականութեան մէջ։ Բայց ինչպէս վերևում ասացինք, անկարելի է որ մի որևէ գրականութիւն գրի անցկացրած լինի այն բոլոր բառական ու ոճային հարստութիւնները, որ մի որևէ խօսուն լեզու ունի։ Այսպէս էլ հայերէնը, որի բառազանձը ամբողջապէս մեզ աւանդուած չէ և որի մէջ կային անշուշտ դեռ ուրիշ զանազան պարսկերէն բառեր, որոնք առիթ էին ունեցել հայ գրա-

կանութիւնը աւանդելու, յատկապէս իր միակողմանի բնաւորութեան պատճառաւ։

2. Թէև պարսիկերէնի ուղղակի ազդեցութիւնը հայերէնի վրայ դադարում է ԺԱ դարից սկսած, բայց նա շարունակում է մինչև այսօր էլ պարսկահայ գաղութների վրայ։ Այստեղ մենք չենք ուզում անել պարսկահայ գաղութների պատմութիւնն ու վիճակագրութիւնը, բայց պէտք է շեշտենք, որ պարսկահայ գաղութ առելով մենք ուզում ենք հասկանալ այն հայ գաղութները, որոնք գտնուում են Առաքատականից դուրս և ուղղակի պարսիկ (ոչ թուրք) ժողովուրդի հետ շփման մէջ են։ Այսպէս են ինգլիշի, Ռաշտի, Ղազինի, Համազանի, Թեհրանի, Սուլթանապատի, Սպահանի, Նոր-Ջուղայի և Շիրակի հայերը։ Այս բոլորի մէջ ամենամեծ թիւը կազմում են Սուլթանապատից մինչև Նոր-Ջուղա ցրբւած հայերը, որոնք 30,000-ից աւելի են։ Այս բոլոր գաղութներն էլ նոր ժամանակի ծնունդ են և սկսում են Շահաբասի ժամանակներից։ Այս թագաւորն էր, որ 1603 թուին Արարատեան նահանգի ժողովրդին քչեց Պարսկաստանի այդ հեռավոր վայրերը։ 300 տարուայ ընթացքում հայերը մեծապէս ազդուեցին պարսիկներից ամէն տեսակէտով՝ բացի կրօնքից։ Լեզուն էլ կրեց մեծ ազդեցութիւն, շատ բառեր, ոճեր ու ասացուածներ, շարադասութեան ձև, շեշտ ու առոգանութեան եղանակը պարսկերէնից անցան տեղական հայերէն բարբառներին։ Բայց այս հարցերի քննութիւնը այլևս չի պատկանում հայերէն լեզուի պատմութեան, այլ մասնաւոր բարբառների ուսումնասիրութեան, ուստի և մենք էլ հրաժարում ենք քննութեան առնել այստեղ։

Իսկ այն գաղութները, որոնք հին ժամանակներում հաստատուել էին Պարսկաստանում, անշուշտ ժամանակի ընթացքում բոլորովին ոչնչացել եւ անհետացել են, ձուլուելով տեղական ժողովրդի մէջ։ Այսօր Պարսկաստանում ոչ մի տեղ չկայ այնպիսի հայ գաղութ, որ հայերէն լեզուն կորցրած ու պարսկախոս դարձած լինի։ Այդպիսի հայեր գտնուում են միայն Պարսկաստանից դուրս, հիւսիսային Կովկասում՝ Ղզլարի Բէքէթէյ կամ Ղարաջալիլ գիւղում, Շամախի մօտ՝ Մաղրասա գիւղում, և Ղուբայի մօտ՝ Քիլիվար և Սալմաս գիւղերում։ Այս բոլորն էլ պէտք է դադարած լինին Պարսկաստանից հին ժամանակ. իսկ հիմա արդէն հայախոս են դառնում։

ՊՐՈՖ. Ն. ԱՃԱՌԵԱՆ